ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<14>> Ապրիլի 2022թ. ՆՄՈ/282-2022

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՆՄՈ/55-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող նոր հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՆՄՈ/55-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 4/14/2022 09:08:03 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի ապրիլի 14 -ի
ՆՄՈ/182-2022 որոշման

«Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի փետրվարի 17-ի
ՆՄՈ/55-2021 որոշման

Կազմ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող նոր հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Ավետիսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ.

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Գ. Հովհաննիսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Դ. Դավթյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ.

Անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունից 2 մասնագետներ.

Առողջապահական համակարգից 1 վնասվածքաբան, 1 վարակաբան.

Անասնաբուժական ծառայությունից 1անասնաբույժ.

«Ոռոգում ջրառ» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղից 1 մասնագետ.

ՀԷՑ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ Արմավիրի էլցանցից 1 մասնագետ.

«Վիոլա ջուր» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Մարզային փրկարարական վարչությունից 2 մասնագետ.

Մարզի հակահրդեհային տեսչությունից 1 մասնագետ:»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

14.04.2022

VERIFIED OCSP 14.04.2022 08:55:13 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023